ԾԱՂԿԱԶԱՐԴ

(Մեր Տեր Հիսուս Քրիստոսի
Հաղթական մուտքը Երուսաղեմ)

Օրհնեալ եկեալ անուամբ Տեառն:
Օրհնեալ որ գալոցդ ես:
Օրհնութիւն ի բարձունս:

Ծաղկազարդը Մեծ Պահքի յոթերորդ կիրակին է, հիշատակը մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի՝ Երուսաղեմ մուտք գործելու: Ծաղկազարդին հաջորդում է Ավագ շաբաթը, ուր հիշվում են մեր Տիրոջ երկրային կյանքի վերջին օրերի տնօրինությունները:

Երբ Հիսուսն իր աշակերտների հետ դուրս եկավ Երիքովից, երկու կույրեր, որոնք նստած էին ճանապարհին, իմանալով, որ Հիսուսն է անցնում, աղաղակեցին. «Ողորմի՛ր մեզ, Հիսո՛ւս, Դավթի՛ որդի» (Մատթ. 20, 29-33): Հիսուսը, գթալով նրանց, բժշկեց ու շարունակեց Իր ճանապարհը: Մոտենալով Երուսաղեմին՝ նրանք եկան Բեթփագե և Հիսուսն իր աշակերտներից երկուսին ուղարկեց այդ գյուղը՝ պատվիրելով այնտեղից բերել մի կապված էշ և նրա հետ՝ մի ավանակ: Հիսուսն ասաց նաև, որ եթե որևէ մեկն արգելի նրանց, ասեն, որ դրանք իրենց տիրոջը պետք են: Այդպես էլ եղավ: Փողոցում կապված էշն ու ավանակն արձակեցին և բերեցին Հիսուսի մոտ: Նրանց

վրա իրենց զգեստները գցեցին, իսկ բազում մարդիկ, հանելով իրենց զգեստները, փռեցին ճանապարհի վրա, այն ճանապարհի, որտեղով պիտի անցներ Հիսուսը: Ժողովուրդն աղաղակում էր. «Օրհնությո՜ւն Դավթի Որդուն, օրհնյա՜լ է Նա, որ գալիս է Տիրոջ անունով, օրհնությո՜ւն բարձունքներում»:

Եվ կատարվեց այն , ինչի մասին հնում աղաղակում էին մարգարեները՝ երազելով տեսնել այդ օրը. «Հուդայից իշխան չի պակասելու, ոչ էլ առաջնորդ՝ նրա կողերից, մինչև գա Նա, Ում պատկանում են հանդերձյալները: Նրան են սպասում ժողովուրդները: Իր ավանակը կկապի որթից, իսկ որթի ոստից՝ էշի քուռակը: Իր պատմուճանը կլվա գինով և իր հագուստը՝ խաղողի արյամբ» (Ծննդ. 49, 10-11):

Հիսուսը եկավ ավետարանելու աղքատներին, բժշկելու սրտով բեկվածներին, գերիներին ազատելու և կույրերին տեսողություն պարգևելու, ինչպես մարգարեացել էր Եսային (Եսայի 61, 1): Շատ կույրեր, դիմելով Հիսուսին, բժշկվեցին, ինչպես Երիքովի փողոցի կույրերը, և շատ տեսնողներ, գայթակղվելով, այդպես էլ կույր մնացին ու չճանաչեցին Հիսուսին: Ավելին, այդ նույն ամբոխը մի քանի օր հետո աղաղակելու էր. «Խա՛չը հանիր դրան» (Մարկ. 15,13):

Ինչպես պատմում է ավետարանիչը, Երուսաղեմում հայտնի Բեթհեզդայի ավազանի ջրերը ժամանակ առ ժամանակ ալեխառնվում էին և բժշկություն պարգևում

նրան, ով այդ պահին առաջինն էր իջնում ավազանի մեջ (Հովհ. 5, 1-4): Բայց երկնային Բեթհեզդայի՝ Եկեղեցու ավազանը մինչև այսօր միշտ ալեհույզ վիճակում է և բոլոր մոտեցողներին կյանք է պարգևում՝ բժշկելով հոգևոր կուրությունը:

«Ուրախացի՛ր Սիոնի դուստր...», քանի որ Սիոնի՝ Եկեղեցու ավազանում զավակներ են ծնվում, ովքեր «արդար, փրկագործ ու խոնարհ» Թագավորին՝ «նստած էշի, էշի քուռակի վրա», պիտի ելնեն դիմավորելու, որպեսզի խաղաղություն իջնի մարդկանց սրտերի մեջ, հաստատվի Աստծո թագավորությունը մեր մեջ՝ «ծովից մինչև ծով և գետերից մինչև երկրի ծագերը» (Զաքար. 9, 9-10):

Մեր Տերը՝ Հիսուս Քրիստոսը, Իր թագավորությունը հաստատելու համար շատ բանի կարիք չուներ. Նրա աշակերտներից երկուսը՝ համաձայն ավանդության Պետրոսն ու Հովհաննեսը, Բեթփագեից ընդամենը մի էշ և էշի քուռակ արձակեցին ու բերեցին Նրա համար: «Տիրոջը պետք են», - ասացին նրանք, երբ այնտեղ փողոցում կանգնած մարդիկ ընդդիմացան: Այսօր էլ գրեթե վիճակը նույնն է. աշխարհը՝ փողոցում կանգնածները, չեն սիրում, երբ կապվածներին արձակում են, նրանք ուզում են մարդկանց տեսնել միշտ կապված վիճակում: Բայց Հիսուսի խոսքն իշխանություն ունի բոլորի վրա և կարող է արձակել բոլոր կապվածներին, որտեղ էլ որ նրանք լինեն:

Շատ մեկնիչներ այդ դրվագում Պետրոսին համեմատել են հինկտակարանյան մարգարեների ու նահապետների հետ, քանի որ նա առաքյալների մեջ ամենատարիքովն էր, իսկ Հովհաննեսին՝ նորկտակարանյան առաքելական դասի հետ, քանի որ Հովհաննեսն ամենաերիտասարդն էր: Հիսուսը միայն նրանց ու նրանց հաջորդներին, այսինքն՝ Եկեղեցուն տվեց արձակելու իշխանությունը:

Հիսուսի՝ ավանակի վրա նստելը խորհրդանշում է այն, որ հետայսու մարդկությունը Հիսուսի լուծը պիտի կրի, Նրա սիրո պատվիրաններով կամ Նոր Օրենքով պիտի մտնի Երուսաղեմ՝ Աստծո թագավորություն: Իսկ այդ ճանապարհը խոնարհության ճանապարհն է, որովհետև «խոնարհ հոգին Աստված չի արհամարհում» (Սաղմ. 50, 19):

Հանդերձները էշի վրա գցելը ավազանի միջոցով մաքրվելն է խորհրդանշում, քանի որ մերկանալով մեր հին հանդերձից՝ նորն ենք հագնում, ինչպես ասվում է Մկրտության բանաձևում. «Որք ի Քրիստոս մկրտեցայք, զՔրիստոս զգեցեալ էք. ալէլուիա»:

Իսկ ճանապարհին հանդերձները փռելը Հիսուսին երկրպագելն է խորհրդանշում. մենք ճանապարհ ենք պատրաստում Նրա համար, մեր անձերը նվիրում Նրան: Մեր նախածնողները, զգեստի նմանությամբ, տերևով փորձեցին ծածկել իրենց մեղքը, իսկ այսօր մենք մերկանում ենք խոստովանելով Նրա առաջ մեր

մեղքերը, և միայն այդ ճանապարհով ազատվում մեղքի անեծքից:

Արմավենու ճյուղերը մեր ընծաներն են մեր Տիրոջը, ինչպես Ննդյան օրը մոգերի բերած ընծաները: Նրան ճանաչում ենք որպես Թագավոր՝ հաղթական պսակը գլխին, անեծքը վերացնող և մեզ կենդանություն պարգևող:

Մեզանում ընդունված է արմավենու փոխարեն ուռենու ոստերն օրհնել Ծաղկազարդին: Ուռենու ոստերը, որոնք անպտուղ են, խորհրդանշում են հեթանոսներին, որոնք անպտուղ էին և պտղաբերեցին միայն Քրիստոսին ընծայվելուց հետո: Ոստերի փափկությունը դարձյալ խորհրդանշում է Քրիստոսին հետևողների խոնարհությունը, իսկ ոստի սնամեջ լինելը՝ հոգով աղքատությունն է, որն ունեցողներին երանի է տալիս մեր Տերը:

Քրիստոսի հետևորդները պետք է դատարկ լինեն աշխարհի, մեղքի փարթամությունից, որպեսզի մաքուր սրտով կարողանան փառաբանել Տիրոջը՝ ասելով.

Օվսաննա Բարձրյալին,
օրհնյալ լինի Նա,
Ով գալիս է Տիրոջ անունով: